ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի սեպտեմբերի 15-ից 21-ը

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Արամ Սայամյան – ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների սպասարկման թիվ 1 բաժնի պետ

Արմեն Խաչատրյան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության դասակարգման և մաքսասակագնային հարցերով մասնագիտական կենտրոն-բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, սեպտեմբերի 15-ից 21-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպութուն (ՀՄԿ)

4. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

ՀՄԿ ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակ համակարգի (ՆՀ) կոմիտեի հերթական՝ 74-րդ նստաշրջանի 1-ին շաբաթվա աշխատանքներին մասնակցություն, մասնավորապես՝ նստաշրջանի օրակարգում ընդգրկված մի շարք խնդրահարույց ապրանքների (ասֆալտը տեղափոխող և խառնող մեքենա, փոշիացված հավի միս, ռադիոմիավոր, ֆիտնես-հայելի և այլն) դասակարգման, ինչպես նաև ՆՀ-ում և դրա պարզաբանումներում բջջային աճեցմամբ մսի և դրանից պատրաստված մթերքների ու այլ տարատեսակ ապրանքների դասակարգման հնարավոր փոփոխությունների քննարկումներին մասնակցություն, դիրքորոշման ներկայացում, քվեարկություն՝ հաշվի

առնելով, որ ապրանքների դասակարգման ՆՀ կոմիտեում ընդունված որոշումները դրանց ՀՄԿ չիրազեկման դեպքում պարտադիր են կիրառման ՀՀ-ում:

5. **Քննարկված թեմաները՝**

Օրակարգում ընդգրկված մի շարք ապրանքների դասակարգման հիմնահարցերի, ՆՀ պարզաբանումների ինչպես նաև ՆՀ և դրա պարզաբանումների ռազմավարական զարգացման հիմնահարցերի քննարկում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Օրակարգում ընդգրկված հարցերի, այդ թվում՝ ապրանքների դասակարգման քննարկումներին, ինչպես նաև քվեարկությանը մասնակցություն:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Քվեարկության արդյունքում մի շարք ապրանքների վերաբերյալ դասակարգման որոշումների ընդունում, որոնք վերջնական կհաստատվեն հերթական՝ 75-րդ նստաշրջանում, ՆՀ 2028թ" խմբագրության մեջ արտացոլման ենթակա ռազմավարական փոփոխությունների՝ այդ թվում ՆՀ պարզաբանումներում մի շարք փոփոխությունների շարունակական աշխատանքների շուրջ պայմանավորվածություն, որոնք կոչված են հնարավորինս համապատասխանեցնել ՆՀ-ն առևտրաշրջանառության միտումներին, նոր ստեղծվող ապրանքների արտադրական գործընթացների պահանջներին և պարզեցնելու են ՆՀ օգտագործումը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

ՆՀ կոմիտեի 74-րդ նստաշրջանում ընդունված որոշումներն անմիջական անդրադառնալու են ՆՀ, ԱՊՀ ԱՏԳ ԱԱ և այնուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի փոփոխության և կիրառման տեսանկյունից՝ հաշվի առնելով, որ ՆՀ-ը հանդիսանում է դրանց իրավական սկզբնաղբյուրը: ՆՀ կոմիտեում ընդունված որոշումները ենթակա են կիրառման ՆՀ պայմանավորվող

կողմերի՝ այդ թվում ՀՀ-ում, ուստի ՆՀ կոմիտեի նստաշրջանների աշխատանքներին ՀՀ մասնակցությունը շատ կարևոր է՝ հաշվի առնելով, որ ՆՀ կոմիտեում են, ընդհանուր առմամբ, ձևավորվում ապրանքների դասակարգման մոտեցումներն ու սկզբունքները, որոնք հետագայում տեղ են գտնում արդեն ազգային անվանացանկերում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Արամ Սայամյան՝

Արմեն Խաչատրյան՝

23.09.2024թ.